Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

16399

361
Г-40

1875

2010

Կ 35

# ՀԱՇԻՒ

խորհրդոյն ժողովոյ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
հաստատեալ Մարդասիրական Ընկերու-
թեան յանուն սրբոյն Գրիգորի Լուսա-
ւորչի 'ի Բագու վասն 1874 ամի։

ԲԱԳՈՒ

Հայոց Մարդասիրական Ընկերութեան Տպարանումն։

1875

361
F-40

Дозволено Цензурою. Тифлисъ 24-го Февраля 1875 г.

60927-ան

154

2002

Гос. Библиотека
Арм.ССР
им. А. Мясникяна

3967 Ъ

# ՀԱՇԻՒ

Մարդասիրական գործում, ինչպէս և ամէն օգտաւէտ գործերում, գլխաւոր պայմանը յառաջադիմութեան կայանումէ նրանում, որ յառաջագոյն սահմանել իւր գործունէութեան նպատակը, յետոյ անփոփոխ և հաստատուն կերպով հետևել նորան։

Խոստովանելով այս ճշմարտութիւնը, Խորհրդական Ընդհանուր Մարդասիրական Ընկերութեան և այս տարի հաւատարմութեամբ հետևեցին միանգամ ընդունած ընթացքին, ունենալով իւրեանց գործունէութեան ասպարիզում երեք գաղափարներ. առաջին՝ Ընդհանուր թիւը բազմացուցանել, Երկրորդ ուսումն տարածել տեղւոյս հասարակութեան չքաւոր Օրիորդաց մէջ կամ միւս քաղաքներում հաստատած երկսեռ ուսումնարաններին դրամական կամ գրաւոր օգնութիւն հասցնելու, Երրորդ՝ նպաստաւորել ուսանող աշակերտաց, որ նրանք կարողանան շարունակել իւրեանց ուսումը արքունի ուսումնարաններում։

Մինչև ո՞ր վախճանի հասան Խորհրդական և միւս Ընկերութեան Ընդհանուր գործունէութիւնքը, այս գաղափարներին հետևելով 'ի ներքոյ յիշեալ փաստերը թող ցոյց տան։

## I

Մեզ ամենեցունս յայտնի է, որ Ընկերութեան Անդամոց մեծ մասը սփռուած է Տէրութեան զանազան քաղաքներում, այս Անդամներից ոմանք իւրեանց գործունէութեամբը, այս տարուայ ընթացքում, չեն խնայել հեռաւորութիւն և ջանք յօգուտ մեր Ընկերութեան։ Վասնորոյ Խորհրդական անդամք պարտաւորութիւն են համարում իւրեանց, յիշել այստեղ նրանց անունները և կարեկցական գործերը։ Գանձակի Պատուաւոր քաղաքացի աստիճանաւոր Ներսէս Աբրահամեան Տէր Ներսիսեանցն, անցեալ 1873 թուականում մտանելով Ընկերութեանս Անփոփոխ անդամոց շարքը, իբր անդադար, Խորհրդական անդամոց հետ ունեցած գրաւոր յարաբերութեամբը և զանազան օգտաւէտ առաջարկութեամբը, Անդամոց թւերին համարեայ մի նոր զօրութիւն տուաւ, կատարելով իւր նախանձելի կոչումը բանիւ և գործով։

Յիշեալ պարոնը, ինչպէս երևում է նորա ընթացքից, մի կողմէ դրել, որպէս թէ, իւր սեպհական գործերը՝ և անձը զոհելով ազգի բարօրութեանը անհանգիստ աշխատում է անդամոց թիւը բազմացնել։ Ընկերութեան Անդամոց մէջը Պարոն Տէր Ներսիսեանցը, կարողեմ ասել հազուագիւտ անդամներից մինն է, որ լաւ է հասկացել բացի իւր պարտաւորութիւնից, Ընկերութեան նպատակը և նորա Կայսերահաստատ կանոնի միտքը, ուստի Խորհրդական անդամք իւրաքանչիւր նորա բարենպատակ առաջարկութիւնները ուշի ուշով անյապաղ կատարելեն և միշտ

պատրաստ են կատարել: Ինչպէս մեր Տէրը ասում է «՚ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա» Գ. Տէր Ներսիսեանցի մի քիչ ժամանակում ցոյց տուած պտղից ընկերութիւնը կարող է համարել նորան ճշմարիտ հայոց շարքերում, որոնք լինումեն Աստուածասէր, ազգասէր, ուսումնասէր, արի և բարենախանձ հողւոյ տէր մարդիկ: Տարւոյս մարտ ամսից սկսած այս ազնիւ պարոնը, հետ զհետէ առաքելէ Խորհրդին մանրամասն տեղեկութիւններ իւր գտած Անփոփոխ և Տարեկան Անդամոց կողմանէ, որը Տփխիս, որը Գանձակ և որը այս երկու քաղաքաց նահանգներում և գիւղերում. Տէր Ներսիսեանցն իւր տարօրինակ ջանիւք և աշխատութեամբը մի տարւոյ ընթացքում կարողացելէ գտնել 8 անփոփոխ և 31 տարեկան անդամք: Բաց ՚ի սմանէ այս ազնիւ պարոնի առաջարկութեամբ և միջնորդութեամբ Խորհրդական Անդամք 1874 թուականում հասցրելէն զանազան դպրոցների և անձանց վերայ դրաւոր ու դրամական նպաստ.

1, Գանձակայ մասնաւոր Օրի. ուսումնարանին 20 ռ.
2, ՚ի նպաստ Խաչակապ գեղջ աղքատիկ ուսանող Օրիորդաց, տասն ռ. դրամ և երեսուն և հինգ դասատետր:
3, Գանձակու Նորաշէն թաղի ծխակ. Դպրո. 10 ռ.
4, Բանանց գեղջ ծխական ուսումնարանին - 40 ռ.
5, Գետաշէնու Հայոց ազգային հոգևոր ուսումնարանի համար յանուն Հոգաբարձութեան նոյն ուսումնարանի, երբև նպաստ գիւղացի աղքատ երեխայոց հարիւր հատ դասատետր:
6, ՚ի Ս. Պետերբուրգ Земледѣльческій Институтումը

ուսանող Գանձակեցի Տրդատ Կարապետեան Մատինեանցին - - . - 120 ռ.

7, Աղնախու Նորաբաց Շուշանիկեան Օրիորդաց ուսումնարանի չքաւոր օրիորդաց կարեւորութեան համար- - - - - - 15 ռ.

8, Գանձակի Նորաբաց օրիորդական դպրոցի աղքատ օրիորդաց Նպաստելու՝ ձրիաբար բաժանելով Նրանց դասագրքերը և այլ կարեւոր դասական պիտոյքները - - - - - 50 ռ.

Խորհրդական Անդամք ոչ մի բանով չեն կարող վարձահատոյց լինել պարոն Տէր Ներսիսեանցի բարերարութեան և արիագործութեան փոխարէն, Նա իւր գործունէութեամբը աշխատեց բարի անուն որ ամեն գանձերից և փառքերից մեծ է: Նորա անունը Ընկերութեան յիշատակարաններում և Անդամոց սրտերում անմոռանալի պիտի մնայ յաւիտեան: Թո՛ղ Նորա խրախուսիչ քայլը, որ փոխում է Մարդասիրական Ընկերութեան օգտի համար՝ զարթուցանէ ազգասէր անդամոց սրտերում հոգին, շարժէ Նրանց հոգւոյ մէջ բարի նախանձ և սէր դէպ'ի միաբանական ընկերութիւն և համախումն որ ընկերութեան կենդրոնը, որքան հեռու է նոցանից, նորա անդամոց սրտերը խրախուսիչ ձայնի սրտին շատ մօտ է: Գանձակի և միւս տեղերի մի քանի պատուական ձայներին ընկերութեան անդամոց հետ միաւորով մի սիրտ և մի հոգի լինող Տէր Ներսիսեանցն է: Մեր սիրելի ազգի մէջ այդպիսի անձինք դուցէ շատերը կան, բայց դժբաղդաբար այս շատերից շատ քչերն են մասնակցում մեզ հետ մի այդպիսի բարեգործական ասպարիզում: Սրտին մաղթեմք առ Աստուած

որ նա ամրացուցէ և անսասան պահեսցէ մեծապատիւ Տէր Ներսէսեանցին վասն Մարդասիրական Ընկերութեան և Ազգի։

Անդամք ուրախ սրտով կամենումեն վկայել և միւս ազգասէր անփոփոխ Անդամոյ կողմանէ։ Այս ազնիւ պարոնը Խասաւիւրտի Օղրուժնոյ նաչալնիկ Սարգիս Դանիէլեան Խուզրաշեանցնէ։ Պարոն Խուզրաշեանցի ինքնակամ Անդամ գրուիլը և յետ այնորիկ ընկերութեանս հետ ունեցած գրաւոր յարաբերութիւնները և շահաւէտ առաջարկութիւնները հաստատումեն, որ նա թէպէտ առանձնացած և հեռացածէ մեծ մեծ հասարակութիւններից և այն միջոցներից, որոնք շարժումեն մարդոյ սիրտը և չեն թողնում մնալ անտարբեր, սակայն ինչպէս նորա նամակներից երևումէ և շատերը վկայումեն պարոն Խուզրաշեանցը զոհելէ իւր սիրտը ու հոգին իւր ազգի բարօրութեան, նա անդադար աշխատումէ ընկերութեան համար և մինչ ցօրս քանի քանի անփոփոխ և տարեկան անդամներէ գտել. բայց որովհետև բնակվումէ մի այնպիսի տեղ, ուր շրջափակուածէ նա օտար ազգերով և հազիւէ պատահում նորան հայ մարդ, վասնորոյ խորհրդական անդամք յոյս ունին, որ պարոն Խուզրաշեանցն, 'ի կարևոր դէպս գործ կ'դնէ ամեն հնարք, որ կատարէ իւր նպատակը յօգուտ Մ. Ընկերութեան։

Խորհրդական Անդամք կամենումեն ասել, որ այս 1874 թուականում նորանք շարունակ կազմելեն նշանակած օրերում իւրեանց նիստերը և երբէք չեն թուլացել յորդորական նամակներով դիմել առ-

զանազան անձինս։ Անդամք չեն կարող պարծենալ իւրեանց այս տարուայ աշխատանքով և աւելորդ եմ համարում այստեղ գծագրել պատճառները, որոնցից գլխաւորը եղել է տարւոյս առեւտրական անմխիթար հանգամանքները, մի քանի անձինք մեր աշխատաւոր անդամներից ենթարկվելով այսպիսի անյաջող հանգամանքներին, չկարողացան Մարդասիրական Ընկերութեան օգնել, բայց մի և նոյն ժամանակ Անդամք գոհանումեն Աստուածանից, որ նա շարժեց զանազան քաղաքներում քանի քանի հայերի սրտերը, որոնք իւրեանց յօժար կամօք Անդամ գրուեցան։ Այս նոր ընտիր Անդամոց անուններն և նուէրները պարտաւորենք համարում յիշել այս տեղ մեր սրտի անկեղծ շնորհակալութիւնը յայտնելով նրանց։

## ԱՆՓՈՓՈԽՔ։

1, Աստիճ. Աւետ Մաթվէիչ Մամիկոնեանց 100 ռ.
2, Գաբրիէլ Գալամեանց - - - 100 „
3, Շուշւոյ պատուաւոր քաղաքացի Սահակ Թաղէոսեանց - - - 100 „
4, Աստրախանաբնակ պատուաւոր քաղաքացի Պօղոս Խաչատրեան Խաչիկեանց 100 „

ԳԱՆՁԱԿԵՑԻ (վաճառականք.)

5, Քաղաքագլուխ Յակոբ Մկրտումեան Լխիկեանց - - - - - 100 ռ.
6, Աղայ Խաչատրեան Աղայեանց - - 100 „
7, Աբրահամ Պետրոսեան Առաքելեանց - 100 „
8, Աւետիք Յովհաննէսեան Մալեանց - 100 „

9, Աստուածատուր Աւետիքեան Բաղա-
քեխայեանց - - - - - 100 ռ.
10, Յովհաննէս Աւետիքեան Սահակեանց- 100 „
11, Դաւիթ Մկրտչեան Զօրզարեանց - 100 „
12, Յովհաննէս Յովսէփեան Դուրգէն-բէգ. 100 „
13, Շուշուայ պատուաւոր քաղաքացի
Գրիգոր Ջ'ղնաւորեանց - - - 100 „
14, Տփխիսու վաճառական Գրիգոր Ցէր-
գէյեան Աղաբէգեանց - - - 100 „

ՑԱՐՍԿԻ ԿՈՂՕՏՑԻԱ·

15, Տիտ.Կնեկլէ Յարութ.Պրոտոպոպովեանց 100 ռ.
16, Բազու. Պօղոս Յարութ. Գիլանցեանց- 100 „

ՏԱՐԵԿԱՆՔ·

1, Աստիճանաւոր Աղեքսանդր Յարութիւ-
նեան Սերգէյեանց - - - - 5 ռ.
2, Վահան վարդապետ Բաստամեանց - 5 „
3, Ամբրոսիմ Գէորգեան Սահակեանց - 5 „

ԲԱԳՈՒԱԲՆԱԿՔ·

4, Յարութիւն Պոպովեանց - - - 5 „
5, Կարապետ Քոչարեանց - - - 5 „
6, Գէորգ Քուրքչեանց- - - - 5 „
7, Գէորգ-բէգ Վարդանեանց- - - 5 „
8, Համբարձում-բէգ Խզրաշեանց - - 5 „
9, Գէորգ Միրզա-Աւագեանց- - - 5 „
10, Յակոբ Մեհրաբեանց - - - 5 „
11, Սարգիս Զօրզարեանց - - - 5 „
12, Յակոբ Տէր Իսրայէլեանց - - - 5 „
13, Գրիգոր Տէր Իսրայէլեանց- - - 5 „

14, Յակոբ Փիրղաղեանց - - - 5 ռ.
15, Յովհաննէս Մելքոնեանց - - - 5 „
16. Յովհաննէս Սերգէյեանց - - - 5 „
17, Յարութիւն Շահնազարեանց - - 5 „
18, Սողոմոն Ստեփանեանց - - - 5 „
19, Անտոն Շմիդտէ - - - - 5 „
20, Եգոր-բէգ Մարդանեանց - - . 5 „
21, Մկրտիչ-բէգ Տէր Մկրտչեանց - - 5 „
22, Բաղդասար Շահկետանեանց - - 5 „

ԳԱՆՁԱԿԵՑԻՔ.

23, Կուբեր. Սեկ. Եփրեմ Յով. Ենգիբարեանց 5 „
24, Յովհաննէս Դաւդեան Փաթալեանց (վաճ.) 5 „
25, Կարապետ Աբրահ. Տ. Ներսիսեանց (վաճ.) 5 „
26, Մանուէլ Պօղոս. Ամիրխանեանց (վաճ.) 5 „
27, Պարուչիկ Աբրահամ Յովհաննէսեան Մելիքեանց (Կալուածատէր) - - 5 „
28. Սողոմոն Պատուականեան Երեցփոխեանց- 5 „
29, Կուբերնսկի Սեկրետար Ղահրաման Սարգսեան Յովհաննէսեանց - - - 5 „
30, Ազնուական Կոստանդին Պօղոսեան Մելիքեանց (Կալուածատէր) - - - 5 „
31, Մկրտիչ Սարգսեան Ղալէչեանց (վաճ.)- 5 „
32, Տէր Գրիգոր Թումայեանց (Անդամ տեղական Հոգևոր կառավարութեան- - 5 „

ԳԱՆՁԱԿ ՆԱՀԱՆԳԻ ԲԱՆԱՆՑ ԳԻՒՂԻՑ.

33, Մատթէոս Աւագեան Գրիգորեանց (հիմնադիր նոյն գիւղի ուսումն., վախճան. ՚ի 23-ն Մայիսի 1874 ամի յիշատակ արդարոց օրհն եղեցի) 5 „
34, Կուբ. Սեկ. Յովսէփ Պ. Տէր Իսրայէլեանց 5 „
35, Ֆելդշէր Եգոր Յովհան. Յովհաննէսեանց 5 „
36, Տէր Պօղոս Եպիսկոպոսեանց (բարեկարգ) 5 „
37, Տէր Անդրէաս Տէր Միքայէլեանց - - 5 „

ՖԻՄԻ ԳԻՒՂԻՑ.

38, Տիտ. Սով. Յովհաննէս Գ. Մամիկոնեանց 5 „

ՂԱՐԱԲՈՒՂԱՂ ԳԻՒՂԻՑ·

39, Տէր Դանիէլ Տէր Բաղրամեանց - - 5 ռ.
40, Վարժ. Պրօգիմ. Գանձակու Դպրոցի
Տիտ. Սով. Յովհաննէս Յ. Գարագիւլեանց 5 „

ԽԱԶԱՓԱԿ ԳԻՒՂԻՑ·

41, Յովհաննէս Բաղիեանց[տանու տէր գիւղի]- 5 „

ՈՍԿԱՆԱՊԱՏ ԳԻՒՂԻՑ·

42, Մէջլում-բէգ Մելիք-Շահնազարեանց - 5 „
43, Բարոնես Տիկ. Եղիսաբէթ Ն. Ֆօնբրիւկին 5 „
44, Տփխիսցի Գաբրիէլ Ա. Հախվերդեանց - 5 „
45, Սղնախցի Աղէքսանդր Յ. Ամիրխանեանց 5 „
46, Կապ. Աղէքսանդր Բարսեղ. Գուկասեանց 5 „
47, Կին նորա Տիկ. Մարիամ Յ. Գուկասեանց 5 „

ՑԱՋԻՋԵՆ ԳԻՒՂԻՑ·

48, Կարապետ Յարութիւնեանց- - - 5 „

ԲԱՐՍԱՄ ԳԻՒՂԻՑ·

49, Աւագ Մելիք Ռոստոմեան (կալուածատէր) 5 „

ՋԱԳԼԻԳ ԿԱՄ ՓԻՓ ԳԻՒՂԻՑ·

50, Պետրոս Մանուէլեանց - - - 5 „

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵԴՈՒ ԱԼԻՂՐԱԽ ԳԻՒՂԻՑ·

51, Յարութիւն Տ· Մ· Տէր Յովհաննէսեանց 5 „

ՎԱՍԱԿԱՇԷՆ (ԲԱՍԱՐԳԷՉԱՐ) ԳԻՒՂԻՑ·

52, Ներսէս Մահտեսի Պարսեղեանց - - 5 „

'Ի Գ· ՋԱԲԱԹԱԼԱՅ,

53, Պօլկ. Բօրիս Մարտինովիչ Շոկոմնիկեանց 5 „

'Ի ՑԱՐՍԿԻ ԿՕԼՈՏՅԻՍ·

54, Կարապետ Տիգրան-Լազարիչ Տիգրանեանց 5 „
55, Ագուլիսցի Աղէքսանդր Մելիք-Ազարեանց 5 „

Որովհետեւ ամեն նուէր իւր ժամանակին եւ ըստ հանգամանաց ունի մեծ նշանակութիւն, վասնորոյ Խորհրդական Անդամք արժանաւոր են համարում յիշել այստեղ եւ այն ընծայաբերութեանց մասին որ տեղւոյս մի քանի բարեսէր անձինք նուիրեցին յօգուտ ընկերութեան։ Նախ պատկի օրը մի քանի բարեպաշտ անձինք յորդորմամբ Գիրադնիւ նախագահի իւրեանց փոխադարձ այցելութեան տեղ

նուիրեցին յիսուն և ութ ռուբ. և Էրզրումի՝ պատուելի Միքայէլ Օրբելեանցն յօգուտ գրադարանի Ընկերութեան ձեռամբն Նախագահի յիսուն ռուբլի։

Որքան փորձերումն Ընկամոց գործունէութեան երկրորդ գաղափարին, այսինքն Օրբելեանց ուսումնարանին, նոքա ամէնքն են համարում միևնոյն գանգատը կրկնել, որն որ արդէն անցեալ տարի ընդհանուր ժողովում այս ուսումնարանի թոյլ ընթացքի մասին։ Ընդամք ինչքան ուրախ են, երբ ուսումնարանը անցեալ տարի ունէր փոխանակ մի գործունեայ անձի, այնքան տրտմեն այսօր, որ այս անձը իւր պաշտօնական անողոքելի գործերի պատճառաւ, նշանակութիւն տալով մի այլ քաղաքում, բաժանուեց ուսումնարանից մնալով որպէս թէ անգլուխ, կառավարվում խորհրդոյն ժողովոյ հայեցողութեան ներքոյ։ Խորհրդոյ մէջ ուսումնարանիս այս անմխիթար դրութեան վերայ քանիցս անգամ խօսուած է և իւրաքանչիւր անգամ Ընկամոց ձայների զանազանութիւնը թոյլ չի տուել սահմանափակել այս հարցը որոշիչ և եղէ վճռականութեամբ։ Նորանից ամենք ակնածելով որ Օրէնս ուսոյցն Հայոց լեզուի վարժապետ Խորէն քահանայ Միրզաբէգեանցն ամէն մասամբ համապատասխանում իւր կոչման, մեծ սէր և աշխոյժ զարթուցանելով Օրբողաց սրտերում դէպի ուսումը, առաջարկեցին նշանակել նորան փոխանորդ. ամենք խնայելով նորա արդիւնք և խաղաղասէր բնաւորութեամբ, որ կարող է մեղմացնել փոխանորդութեան ծանր պաշտօնը ճշդութեամբ կատարելոյ ժամանակը, որից անքաժանէ անհամաձայնութիւն և տժգոհութիւն 'ի կող-

մանէ փարժապետաց, յայտնեցին թէ Խորէն քահա-
նայքն հարկաւոր չէ բեռնաւորել բաց՚ի իւր պաշտօնից
մի այլ պարտաւորութեամբ, որ կարողէ ՚ի տեղի
օգտի վնաս բերել: Այս միջոցին գերյարգոյ Խաչա-
տուր Բանանեանց, որ նախագահի բացակայութեան
պատճառաւ, կառավարումը նորա տեղը խորհրդական
Անդամոց միաձայն ընտրողութեամբ, մանրամասն բա-
ցայայտելով Օրիօր. Սալթմարանի նշանակութիւնը,
նորա անցեալ և ներկայ դրութիւնը, այն դժվարու-
թիւնները, որոնց Անդամք հանդիպեցին չ՚գտնելով
մի ուսուցչուհի հայ ազգից կամ կին ո՛չ Բագու և
ո՛չ միւս քաղաքներում, յայտնեց իւր կարծիքը յե-
տագայ խօսքերով «Մեր Ընկերութեան Օրիօր. դպրո-
«ցը չի կարելի ասել թէ՝ աւելորդ է այս քաղաքում,
«բայց մի և նոյն ժամանակում չ՚եմ կարող ասել,
«թէ նա օգուտ բերում ժամանակիս պահանջման
«պէս: Ի սկզբանէ այս դպրոցը հաստատող հիմ-
«նադիր անդամք լաւ են հասկացել, որ եթէ հար-
«կաւոր է Ընկերութեանս ունենալ մի դպրոց, նա
«պէտք է բացուի Բագու, ուր գտանվում է Ըն-
«կերութեան խորհուրդը և Անդամոց գործունէու-
«թեան կենդրոնը: Հիմնադիրները դպրոցիս բացման
«ժամանակ դուցէ ունեցել են ՚ի նկատի թէ՝ կ՚հա-
«սանեն օրեր, երբ Ընկերութիւնը բաւական բերմուն-
«քով կ՚հարստանայ կամ տեղոյս հասարակութիւնը
«իւր կողմից ցոյց կ՚տայ զգացմունք ձեռնտուու-
«թեան և համակրութեան մի այդպիսի ամենա-
«հարկաւոր ձեռնարկութեան: Հիմնադիրներին յա-
«ջորդող խորհրդական Անդամք ՚ի չորս որոց և
«մեք, այս յոյսերով պահպանեցինք դպրոցը ըստ

«չափու կարողութեան կամ պարզը ասած անդա-
«մական գումարաց տոկոսիքով մինչ ցայսօր: Նրանք
«կ'լինէր, եթէ մեր այդ յոյսերը կատարուէր: Դուք
«գիտէք որ ընկերութիւնը իւր կանոնի զօրութեամբ
«չունի իրաւունք իւր եկամուտը անգործադրելի թո-
«ղուլ բարեգործական դէպքերում, մի և նոյն ժա-
«մանակ չունի իրաւունք վատնել նորան անխնայ:
«Այսպիսի դրութեան մէջ Ընկերութիւնը բացի
քանի մի իւրաքանչիւր տարուայ ընթացքում գտած
«Անդամների, չունենալով մի այլ առատ աղբիւր,
«չէր կարող 'ի հարկէ վարձել բարձր գիտնական վար-
«ժապետներ կամ վարժուհիներ, որ դպրոցը գլխովին
«վերանորոգուէր և ստանար մի նախանձելի նշանակու-
«թիւն ըստ պահանջման ժամանակիս: Մեզանից
«ոմանք անդադար աղաղակումեն, թէ չունենք ճշմա-
«րիտ և գիտուն մայրեր, մեր որդիքը բարոյական
«սնունդ չեն ստանում իւրեանց ծնողներից, մինչ
«ցուսումնարան մտնելը, ուրեմն հարկաւորէ պահ-
«պանել դպրոցը որպիսի և իցէ կերպով: Ես կամե-
«նումեմ հարցանել Ձեզանից. Ընկերութիւնը մինչ
«ցօրս կարողացելէ՞ արդեօք պատրաստել մի քանի
«մայրացու օրիորդք, կարծեմ ո՛չ, եթէ դժբաղդա-
«բար, նոցանից մի քանիսը ստացելեն մեր դպրոցում
«ուսման ճաշակը և կարողացելեն լաւ գրել ու կար-
«դալ, այդ խղճալիները ուսումնարանից արձակվե-
«լուց յետոյ, մտանելով իւրեանց ծնօղաց իշխանու-
«թեան ներքոյ, մնաս բարեաւեն արել իւրեանց ստա-
«ցած բոլոր գիտութիւնների հետ: Սրանից աւելի
,,մի լաւութեան չէր կարելի մեզ սպասել, որով-
հետև մեզ քաջ յայտնիէ, որ ո՛չ միայն մեր չքաւոր

,,այլ և շատ հարուստ Հայերի տանը ուսումնա-
,,ւորութիւնը կամ քրիստոնէական կրթութիւնը
,,աչքից ընկած, և մի կողմը ծալած կեղտաշորի վի-
,,ճակումն է: Ամենեցունցս յայտնի է, թէ այս վերջին
,,հինգ տարուայ ջանքը, խրատները, խնդրքները և
,,աղաչանքները ի՞նչ հետևանք ունեցան և ի՞նչ
,,պտուղ բերին. որպէս և իցէ նոքա չ'կարողացան
,,զարթնացնել ծնողաց սրտերում կարեկցութիւն
,,և սէր դէպ'ի ուսումնարանը: Մենք չ'լսեցինք նո-
,,ցանից ո՛չ մէկից, ո՛չ գանգատ և ո՛չ մի պահանջ
,,թէ արդեօք ի՞նչ է պատճառը, որ նրանց աղջկերքը
,,բթամիտ մնացած և չեն կարողանում դէպի յա-
,,ռաջ վազել տղայոց պէս: Կարող ենք արդեօ՛ք
,,այս մասով ցոյց տալ մեր ուսումնարանում ու-
,,սումնաւարտած կամ ուսանող մի օրիորդի վերայ
,,որն որ գոնէ չափաւորապէս կրթուած լինէր այնքան
,,որ ժամանակին ունենար իրաւունք մայր կոչուիլ
,,իւր որդւոյ և կարողանար ուսուցանել իւր որդիքը,
,,բացի մարմնաւոր և հոգևոր կաթով. այսինքն այն-
,,պէս, ինչպէս պարտաւորեն սնուցանել քրիստոնեայ
,,մայրերը. ուրեմն այն ուսումը, որն որ ստանումեն
,,մեր ուսումնարանում, (ի հարկէ խօսքս հարուստ-
,,ներինէ վերաբերում) նրանք կարօղեն ստանալ և
,,հենց իւրեանց տանը, եթէ նրանց ծնողքը չ'խնայեն
,,մի քանի մանեթ, վարձելով առանձին ուսուցիչ:
,,Այսպիսի հարուստ և բազմամարդ հասարակութեան
,,մէջ Ընկերութիւնը իւր միակ զօրութեամբ և
,,անզօր կարողութեամբ կամենումէ պահպանել օրի-
,,որդաց ուսումնարան, կամենումեն հարցանել, թէ
,,արդեօ՛ք ի՞նչ նպատակաւ: Դա գուցէ պարտաւոր-

„վանէր 'ի սկզբանէ խաղալ մի դեր, որ իւր նշա-
„նակութիւնը ցոյց տայ գործով Բագու բնակող
„անդամոցը և սրանով բամբասանաց դռները փակէ
„և չլսէ այն տրտունջը, որ երբեմն հասնումէր մեր
„ականջներին, որպէս թէ՝ ընկերապատկան գումար-
„ները մնումեն և նրանց պտուղները աչքով չեն
„տեսնում, սակայն այսօր իւրաքանչիւր անդամ
„արդէն համոզուածէ, որ Ընկերութեան կոպէկը
„'ի զուր տեղը գործ չի ածվում և թէ Խորհրդա-
„կան Ժողովք ամեն րոպէ պատրաստեն հաշիւ
„տալ և շատ ուրախ կ'լինէր, եթէ մէկը ցանկանար
„տեղեկութիւն առնել գումարաց և միւս գործու-
„նէութեանց կողմանէ, ապա ուրեմն այս հարցը ինքն
„ըստ ինքեան վճռուած պիտի համարած: Այժմ
„կամենումեմ եզրակացուցանել իմ՝ հայեացքը, բա-
„ցայայտելով իմ նպատակը, որի համար ես յառաջ
„բերի ուսումնարանի այժմեան դրութիւնը,-շարու-
„նակեց պարոն Գանանեանցն: Սիրելի ընկերք, ամեն
„ընկերութեան տանուտէր, հարուստ կամ չքաւոր,
„եթէ կամենումէ մի տուն շինել կամ մի արհեստ-
„անոց բացել, նա չափումէ իւր կարողութիւնը
„և յետոյ սկսում՝ գործ կործել. Սրանից որը իմաս-
„տունէ և չքաւոր մեծ զգուշութեամբ նախատեսու-
„թեամբ և համբերութեամբ է սկսում բանը, երբէք
„չի շտապում երկնչելով որ չի ապաւի շուտով իւր
„դրամագլուխը և անօգուտ մնայ:— Ընկերութիւնը
„պիտի խոստովանած, իւր հաստատութեան օրից
„սկսած չի հեռեւած ո՛չ մի բանով հրաշագործ
„ցոյց տալ իրան հայոց մէջ, այլ որպէս մի խելացի
„տանուտէր կանոնաւոր ձեւով և խնայողութեամբ մե-

,,խնել է իւր գումարները ամենահարկաւոր դէպքերում
,,և ո՛չ աննպատակ, սա մի լոկ խօսք չէ որ ասումեմ
,,այլ կարող են վկայել իմ խօսքին նորա կենդանի
,,պտուղները, որ շատերին յայտնի է։ Ընկերութիւնը
,,այսօր բաց՛ի անդամական նուէրներից, եթէ չունի
,,մի այլ անկախութիւն, ուրեմն իմաստուն վաճա-
,,ռականի պէս, ինչպէս մինչև այսօր եղել է, քանի
,,նորա դրութիւնը և դրամական հնարները, Աստուած
,,մի՛ արասցէ, չ՚են քայքայուած և չեն փոքրացած,
,,թող առաջը առնէ այն գումարաց, որոնք հա-
,,մարեա՛ առանց մի արդիւնաւոր նպատակի անդա-
,,նալի ծախսումէ Օրլորդայ ուսումնարանի վերայ։
,,Ընկերութիւնը որքան նիւթականով տկար է այնքան
,,և զօրաւոր է այն խրախուսանքներով, որ ստացել է
,,Ամենաողորմած Կայսեր՛ց. նա եթէ չի կարողա-
,,նում Օրլորդայ ուսումնարանը վերանորոգել, որ
,,համապատասխանէ ժամանակիս պահանջման, գիտ-
,,նական ուսուցիչներ և վարժուհիներ վարձելով,
,,թող իւր չափաւոր հարստութեա՛նը տայ մի ավելի-
,,և օգտաւէտ նշանակութիւն։ Ամենեցունցս յայտնի է,
,,թէ գիւղական կեանքում հասարակօրէն ի՛նչ
,,միամտութիւն և պարզութիւն թագաւորում
,,յայտնի է մեզ և այն թէ որպիսի խեղճութեան և
,,և կուրութեան մէջ՛ն գտնվում մեր գիւղական
,,աղջիկերը։ Քաղաքացիք շատ միջոցներ ունին և
,,նրանց որդւոց համար բացուածէ լուսաւորու-
,,թեան զանազան ասպարէզներ. Ուրեմն եթէ Ըն-
,,կերութիւնը կամենումէ Հայոց ազգի սրտին հա-
,,մարուած աչքաթող արած և լուսից հեռացած
,,զաւակներին մի օգնութիւն անել, որ մեր գիւ-

,,ղական եղբարք անմխիթար չ'մնան, մեծ բարեգոր-
,,ծութիւն արած կ'լինէր, եթէ իւր Մարդասիրու-
,,թեան ձեռքը տարածէր և գիւղական աղջկերանց
,,վերայ մի կամ երկու գիւղերում Օրիորդաց դպ-
,,րոցներ բացելով տեղական քահանայից հովանա-
,,որութեան ներքոյ: Մեր օրիորդաց ուսումնարանի
,,վերայ ծախսումենք տարենը մինչ ցհազար ռուբ.,
,,որ լինումէ վարժապետաց վարձ, վառելեաց և պա-
,,հապանի: Այս գումարի երրորդ մասը բաւականէ
,,երկու գիւղական ուսումնարանաց համար, մինչև
,,ուղղութեան և կարգի գլխը նրանց. իւրաքանչիւր
,,գիւղական քահանայ, եթէ ստանայ ընկերութիւնից
,,տարէնը հարիւր մանեթ, շատ մեծ ուրախութեամբ
,,յանձն կառնէ ուսումն տարածել աղջկերանց մէջ:
,,Լուսաւորութիւն կամ ուսումն տարածել ասելով,
,,չեմ կամենում ասել, թէ գիւղական աղջկերանց
,,տալ մի այնպիսի ուսումն, որն որ դժվարութեամբ են
,,մարսում և հենց լուսաւոր ազգաց զաւակները,
,,այլ միմիայն գրագիտութիւն սովորեցնել, որ լաւ
,,կարդան և կարդացածը հասկանան և գրեն: Շատ
,,օրինակներով համոզվածենք, բնականապէս գիւղա-
,,կան աղջկերքը մտօք շատ սուրեն, քանթէ քաղաքա-
,,ցիները, աղջիկների պարզ կեանքը և նրանց երևա-
,,կայութիւնը ո՛չ մի բանով չի շփոթուած. նրանց
,,աչքերը չեն տեսնում այն առարկայքը և չեն լսում
,,այն անտանելի և անլսելի լուրերը, որոնցով հանա-
,,պազ խանգարումեն քաղաքակեաց աղջկերանց հոգին
,,ու միտքը: Ամենեցունցս յայտնի է թէ այն մարդը,
,,որ ուսեալ չէ, նա զուրկ է հոգեկան մխիթարութիւնից
,,թէ հարուստ և թէ աղքատ, եթէ կայ աշխարհում

„ճշմարիտ մխիթարութիւն կամ երջանկութիւն, նա „էլ ուսումնասէր մարդկանց մէջ կ'գտնուի։ ուրեմն „եթէ մի այդպիսի երջանկութեան կարօտ են և հենց „քաղաքացիք, որո՛նք շատ հնարներ ունին լուսա- „ւորութիւն ստանալու, թող թէ գիւղացւոց հա- „մար ինչքան հարկաւոր է, որ ամենեքին զուրկեն այս „լուսից և որպէս մի անպէտք արարածք, մնացածեն „առանց հոգացողութեան։ Մեք երբ ծնվումենք „առաջին սնունդը ստանումենք մեր մայրերից. նոքա „իւրեանց գրկում, իւրեանց քնքոյշ զաւակաց շատ „հեշտութեամբ կարողեն մտցանել և նրանց մտքի „և հոգւոյ մէջ քրիստոնէական սկզբմունքները սեր- „մանել, քանթէ մի առանց այդպիսի ուսման հա- „սունացած պատանեակ կամ աղջիկ, որ ինչքան „կամենումէ թող սովորի դժուար թէ հասանի նա „ճշմարիտ գիտութեան։ Բայց այսպիսի ուսանողներ „արդարև շատ բան գիտեն, մինչև անգամ երկնքի „աստղները կարողեն համարել, բայց այն, որ գլ- „խաւորը և հարկաւորագոյնն էր գիտենալ մի քրիս- „տոնէի համար, շատերը նրանցից անհարկաւոր բան համարելով մի կողմն են ձգում։ Կամենումեմ ասել, „թէ գիւղական մայրերը, եթէ ունենային չափաւոր „գիտութիւն այնքան որ կարողանային միայն կար- „դալ Աւետարան և հասկանալ, յայնժամ նոքա „կարողեն ներգործել իւրեանց ընտանեաց և հաս- „րակութեանը, յայնժամ նոցա կեանքը մի նոր ուղ- „ղութիւն ստացած և որպէս խաւարից ազատուած, „լոյս կ'տեսնէին և այն Աւետարանական փրկարար „լոյսը կ'տարածուէր իւրեանց զաւակաց և ուստերաց „վերայ. որոնց համար հոգևոր մխիթարութիւնը,

Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм.ССР им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվան
3967 Բ

„Աստուածային պատուիրանաց և մարդկային պար-
„տաւորութեանց ճանաչելը մեծ բաղդ և երանու-
„թիւն կլինէր. աՀա ուսումն կատարեալ, որից ըղձ-
„կուածեն շատերը այն ամբարաՀաւած և մեծ գի-
„տութիւններով ներանները լիքը երկրպագները և
„երկրպագուՀիք: Չեզ յայտնիէ որ գիւղացին
„իւր օրուայ դառն աշխատանքից յետոյ դալիսէ
„տուն, արեխները Հանում և քուն մտնում, որ գոնէ
„քնով մխիթարուի այլ երբ նորա կինը կամ դու-
„ստրը մի փոքր ժամանակ նորա Համար կ՚կարդայ
„Աւետարանից, որոյ իւրաքանչիւր թերթը պարու-
„նակումէ իւր մէջ Հոգի, մխիթարութիւն և կեանք,
„յանժամ խղճալին նոր զօրութիւն կ՚ստանայ,
„յուսով կ՚քնէ, և յոյսով վեր կ՚կենայ առաւօտեան
„և նոր «փառք քեզ տէր Աստուած» առաւօտեան
„աղօթքը դուրս կ՚գայ նորա սրտի խորքից առանձին
„զգացմամբ և ո՛չ այնպէս, ինչպէս առաջէր և յե-
տոյ ո՛չ նեղութիւն և ո՛չ թշուառութիւն նորա
„ձեռները չեն կարող թուլացնել և երբէք չի անի-
„ծել իւր ծնած օրը յուսաՀատ քրիստոնէի պէս:
„Այս ամեն խօսքերս գուցէ ծնունդ երևակայու-
„թեան Համարէք դուք, բայց պէտքէ իմանայք, որ
„ամեն տեսակաւորութիւն կամ ամեն մի շինուած,
„ծնունդէ երևակայութեան ուստի եթէ Չեր կող-
„մից դժուարինէ երևում 'ի կատար ածել մի այդ-
„պիսի առաջարկութիւն, ես մինչև Չեր կարծիքը
„այս մասին ինձ յայտնելը կամենումեմ ասել, որ
„մեծ դժվարութիւնը մի միայն նորանումէ, որ
„գիւղացները կարողեն մնալ առանց վերատեսչի և
„ընկերութիւնը այս պատճառաւ չի կարող ունենալ

,,Հնար վերահասու լինել օրիորդաց յառաջադիմու-
,,թեան ուսուցչի հետեւողութեան կողմանէ: Սորա
,,ընդդէմ ես կարողեմ ասել, թէ ամէն դժուար բա-
,,ներում հեշտութեամբ ըմբռնելոյ համար մի հնար
,,պէտքէ: Ես առաջարկումեմ մի այնպիսի հարց
,,որոյ վերայ պէտքէ մտածել և զգուշութեամբ վճ-
,,ռել, թէ արդեօք հարկաւորէ տեղւոյս Օրիորդաց
,,դպրոցը փակել և նորերը գիւղերում բացել, թէ
,,ոչ: Եթէ Ձեր հայեցողութեամբը հարկաւորէ ան-
,,պատճառ, ուրեմն կմնայ մեզ վճռել վերատես-
,,չին վերաբերեալ հարցը:" Գ. Գ. Եարեսեանցն և
Թումայեանցն այս առաջարկութեան հետ մասամբ
իւրք համաձայնելով յայտնեցին թէ ,,ուսումը
,,հարկաւորէ ամեն մարդոյ, ուրեմն պէտքէ տարա-
,,ծել նորան ամեն տեղ որպէս մի Աստուածահաճոյ
,,գործ. ինչ կերպ և իցէ, եթէ մի լոյս կամ մի ճրագ,
,,որ շարունակ մի քանի տարի մի տեղ լուսա-
,,ւորելով հասելէ առ կայծն, բայց մի և նոյն ժամա-
,,նակ այս լոյսը վայելել են ոմանք լաւ կամ վատ.
,,մեր կարծիքով հարկաւոր չէ թողնել նորան որ
,,ամենեւին հանգչուի: ,,Պարոն Թումայեանցն յարակ-
,,ցեց, թէ՝ պէտքէ ուսումնարանը մնայ, ինչպէս
,,մինչև ցայսօր հաստատ և եթէ ընկերութեան նիւ-
,,թական կարողութիւնը չի ներում թանկ գնով
,,գիտուն վարժապետներ և վարժուհիներ վարձել.
,,թող մեր Օրիորդք բաւականան մի միայն գրագի-
,,տութեամբ, ինչպէս առաջարկումէ պարոն Քանա-
,,նեանցը գիւղօրայքում, թող լաւ ուսանին Քրիս-
,,տոնէական վարդապետութիւնը և թուաբանու-
,,թիւնը, թող կարել և ձևել սովորեն, ինչքան

,,կարելի է և այս ամենը հեշտ է դիւրըմբռնելի առ-
,,արկայք են և շատ հարկաւոր ազգատ աղջկերանց
,,համար, քանի թէ բոլորովին զրկել այս տեղ նրանց
,,և այս նուազ լոյսից, և սկսենք լուսաւորել միւս
,,տեղեր, ուր վերահասութիւն գործելը շատ հեշտ
չէ:՚՚ Պարոն Թումայեանցի հետ համաձայնեց պարոն
Ներսէս Արասխինիկեանցն, իսկ պարոն Ապրեսեանցն
իւր կողմից եւս աւելացրեց թէ՝ ,,նա օգտաւէտ
,,համարում ընկերութեան համար փակել ուսում-
,,նարանը և ազգատ օրիորդներից մինչև տասն աղջ-
,,կերք յանձնել պարոն Յ. Բալանթարեանցին, որ
,,նա իւր օրիորդական դպրոցը ընդունէ և ընկերու-
,,թեան հաշուով նորանց ուսուցանէ մի և նոյն
,,առարկաները, ինչ որ իւր դպրոցի օրիորդքն են ու-
,,սանում,,: Պարոն Ապրեսեանցի այս վերջին առա-
ջարկութեան հետ համաձայնեց և պարոն Վ. Ար-
շամեանցն: Վերջապէս մնացեալ անդամք. պարոն
Ծատուրեանցն, Այվազեանցն և Դիլդարեանցն
միաձայն յայտնեցին, ,,թէ յառաջագոյն մեզ պէտք
,,ունենալ տեղեկութիւն այն մասին, թէ արդեօք
,,կ՚ գտնուին գիւղօրայքում ուսումնասէր կամ միջակ
,,ուսում ունեցող քահանայք, որք յանձն առնեն
,,ուսուցչութեան պաշտօնը և կարողանան կատարել
,,նորան, իսկ յետոյ երբ մենք կունենանք, որպէս
,,թէ առ ձեռն պատրաստի մի կամ երկու քահա-
,,նայք և նրանց կողմից յօժարութիւն կամ հոգ-
,,ևոր իշխանութեան կողմից թոյլտուութիւն,
,,յայնժամ կարողեմք, և անշուշտ հարկաւոր է բաց
,,անել գոնէ մի գիւղում դպրոց: Այլ ինչ վերա-
,,բերում է վերատեսչութեան մեք Անդամքս, եթէ

„նեղութիւն յանձն առնեմք կարողեմք երբեմն այնպէս „գոնէ տարին մի անգամ, մեկը մեզանից այցելու„թիւն անել մի գիւղական դպրոցներին և եթէ „այդ առնող անդամը չ'կամեցաւ գնալ իւր ծախսով „թող այն ժամանակ ընկերութիւնը կարգադրու„թիւն անէ այդ մասին և նշանակէ 30 կամ 40 „մանէթ ճանապարհի ծախս, բայց տեղւոյս ուսում„նարանի փակելոյ մասին չեմք կարող ո՛չ բացասել „և ո՛չ հաստատել, այս հարցը թող մնայ ընդհանուր ժողովը'':

Առաջադիրը մատուցանելով մի նամակ Շամախւոյ գաւառի Գիւլք գեղջ Մեսրովբ քահանայից ստացած յայտնեց թէ նա մի քանի անձանց հետ գիւղական Օրիորդաց ուսումնարաններին վերաբերեալ հարցի համար խօսակցութիւն է բացել գրաւոր կերպով և այս առաջարկած նամակը հետեւանքն է նորա խօսակցութեան, երբ նամակը կարդացին Խորհրդական Անդամք, նորա պարունակութիւնը ցրեց, նոյն գիւղերում ուսեալ քահանայ չ'գտնուելոյ վերայ ունեցած կասկածանքը և այնուհետեւ իմացան, որ գիւղականի տղայոց կամ օրիորդաց դպրոցը մի երազ, ցնորք կամ պատիր երեւոյթ չ'պիտի համարին. Մեսրովբ քահանայի նամակից երեւում է որ այրք և կանայք անհամբեր սպասումեն մի այդպիսի ցանկալի յեղափոխութեան իւրեանց որդւոց կեանքի հորիզոնում:

Մեծարգոյ Անդամք, այսօրուայ մեր միաբանական ժողովը պարտաւորէ իւր խորագիտին հայեացքը դարձուցանել այն առարկայի վերայ կամ այն բա-

բռնական շինութեան վերայ, որոյ հիմքը, թէպէտ ամրութիւն չունի, այնպէս որ և յետ այսորիկ կարողանայ մնալ հաստատուն և չ'քայքայուիլ, սակայն մի և նոյն ժամանակ նա ստացելէ տեղւոյս հասարակութեան մէջ մի մեծ նշանակութիւն և դարձելէ որպէս թէ մի մշտենջենաւոր ապաստանարան անհայր և անմայր կամ աղքատ ծնողաց աղջկերանց համար: Այս հարցը որքան Ձեր աչքին երևայ դժուարալուծելի, այնքան նա հեշտութեամբ կ'լուծուի, երբ քննողութեան ժամանակը իւրաքանչիւր Ընկամք Ընկերութեան օգուտը և նորա ժամանակիս պահանջմանը չ'համապատասխանողնիւթական հնարները 'ի նկատի ունենայ: Մեք մեր Ընկերութեան մեծ անունովը չ'պիտի պարծենանք, այլ եթէ կարելի է այս աշխարհում մի բանով պարծենալ, երբոր և հազարաւոր տարիներով թագաւորող տէրութիւնները ճարակ են լինում մի հարուածի և իւրեանց անզգուշութեամբ լինումեն առակ նշաւակի· թող մեր պարծանքը լինի մեր զգուշութիւնը և խոհեմութիւնը: Թող չշարժուենք ամեն հողմով, որ փչումեն պարբերական թերթերի միջոցաւ, մեր ազգի մի քանի վառուած անհատները: Եթէ հարկաւորէք համարում պահպանել տեղւոյս օրիորդաց դպրոցը իւր նոյնութեամբը, ինչպէս կայ, կարողէք յայտնել միաձայն Ձեր միտքը: Քննեցէք դրանց շրջանը և տեսէք կարողէն արդեօ՛ք նորա լցուցանել մեր ազգի պահանջը, այնպէս որ չ'եղծահարուենք և ուշի չ'գանք զմայլողութիւնից այն ժամանակ, երբ ուշ կլինի մեզ համար վերանորոգելը:

Դուք պիտի լաւ հասկանաք, որ դպրոցի բարեկարգութիւնը, առաւելապէս այնպիսի դպրոցի որ հռչակուածէ ազգի մէջ, կախուածէ նիւթական հնարներից: Ընկերութեան հնարները չեն թող տալիս խնայողութեան կապը ձեռքից բաց թողնել և ելանել այն գումարաց շրջանից, որ գործէ ածում իւրաքանչիւր տարի, որպէս թէ նորա համար, որ կարողանայ պահպանել դպրոցը իւր անյառաջադէմ դրութեան մէջ: Խորհրդական Անդամոց համար մեծ մեղք պիտի համարուի, եթէ այդ ամենահարկաւոր հարցը թողնէին լռութեան ներքոյ, և եթէ այսօր բացայայտումեն Ձեր առաջև բոլոր հանգամանքը նոքա յուսամեն, որ դուք ամեն բան անաչառ կերպով կքննէք և ճշմարտութեամբ կվճռէք:

## III.

Երրորդ գաղափարը, որին հետևել են Խորհրդական Անդամք, վերաբերումէ ընկերութեան որդեգիրներին, որոնք ուսանումեն այժմս Տէրութեան զանազան ուսումնարաններում և որոց անունները և նորանց վերայ ուղարկած և տուած դրամական գումարաց որքանութիւնը կարողէք տեսանել յետագայ դրամական հաշուի մէջ միւս ծախսերի շարքում:

# ՄՈՒՏՔ ԴՐԱՄՈՑ:

1, Առ 1-ն Յունվարի 1874 ամի ընկերապատկան գումարից մնացել էր 45 հատ խաղաղ. 5% բիլեթներ, հաշուելով իւրաքանչիւրը 104 ռ. 50 կ. 4702 ռ. 50 կ.

Զուտ գումարը - - 6963 ,, 2 ,,

2, Հաշտարար դատաւորից ուղարկած ընծայաբերութիւնը յօգուտ Ընկ. 20 ռ. „

3, 1874 թ. Յունվարի 26-ին ներկայացրած թատրոնից օգուտ ստացաւ 140 „ 83

4, Զատկի օրն միմեանց փոխադարձ այցելութիւն չանողներից, որք փոխանակեցին սովորական այցելութեան դրամական ընծայաբերութեամբ ստացաւ 58 „ „

5, 16 Ընկ. անդամներից ընծայ. 1,600 „ „

6, Առանձին ընծայաբեր. պարոն Միքայէլ Օրբէլեանցէն յօգուտ ընկերութեան գրադարանի - - - 50 „ „

և Խասաւիւրդից պ. Իւզբաշեանցի ձեռամբ - - - - - 25 „ „

7, 55 Տարեկան անդամներից ստաց. 275 „ „

8, Թոշակաւոր աշակերտուհիներից 45 „ „

9, Ընկերապատկան այն շինութիւնից, որն որ տուածէր վարձու. այսինքն մի սենեակից և մի անբարից ստացաւ- 84 „ 40

10, Տոկոսիք ստացաւ ընկերապատկան խաղարկական 45 5% բիլեթներից- 337 „ 45

6963 ռուբ. զուտ դրամից ընդ ամէնը 1,054 „ 18

11, Տպարանից, որն տուած է կապալաւ Գ. Աստուածատուր Թարվերդեանցին - 550 „ „

Գումարն է - -15,905 „ 43

## ԵԼՔ ԴՐԱՄՈՑ:

Օրիորդաց ուսումնարանի երկու վարժապետաց վարձ- - - - 591 „ 66

2, Բագուայ գիմնազիայում ուսանող աշակերտ Եգամալեանցին - - - 7 ,, 50

3, Բագուայ գիմնազ. ուսանող երկու որդեց. Աբելեանցին և տէր Սարգսեանցին 192 ,, 33

4, Պետերբուրգ ուսանող որդեգիր տէր Յովհաննէսեանցին - - - 100 ,, ,,

5, Մոսկով ուսանող որդեգիր Մեհրաբեանցին . - - - 120 ,, ,,

6, Այրի կին Միլանսկուն, որ ուսանում է Պետերբուրգում մանկաբարձութիւն, միայեայն- - - 15 ,, ,,

7, Ուղարկուեցաւ Սամարու քաղցելոց համար Թատրոնի ժողոված գում. 139 ,, ,,

8. Այրի կնոջն Մկրտչի Այվազեանցին տուաւ սահման. նորան համար - 103 ,, ,,

9, Խորհրդարանի վերաբերեալ մանր ծախք - - - - - 41 ,, 36

Փոստային և հեռագրական ծախք 18 ,, 86

10. Ուսումնարանի փայտի համար 41 ,, 26

11, Աշակերտուհեաց համար գնելու ձեռագործի զանազան պիտոյքներ - 31 ,, 53

12, Բաշխուեցաւ աղքատ աշակերտուհեաց ուսանելի գրեանք - - 12 ,, 95

13, Ուսումնարանի պահապանին - 72 ,, ,,

14, Ընկերապատկան բիլեթների ապահովացնելուն - - - - 14 ,, 70

Բիլեթներն փոխել. երկրորդն ընդ առաջնոյն 76 ,, 25

15, Շինութեան կարկատանի համար 5 ,, 8

16, Գանձակում բաժանուած է ուսումնարանաց պարոն տէր Ներսիսեանցի միջնորդութեամբ դասագրեր 310 հատ որոնք արժեն Ընկերութեանս - - 62 ,, ,,

| | | |
|---|---|---|
| 17 Խորհուրդի Թոյլտուութեամբ պ. տէր Ներսիսեանցն ընծայաբերութիւնէ արած Գանձակու նահանգի երկսեռ ուսումնարանաց, Գանձակու օրիորդաց ուսումնարանին - - - - | 50 ռ. | „ |
| Նորաբաց Ինկիբարեանցի մասնաւոր ուսումնարանին - - - - | 20 „ | „ |
| Խաչափակ գեղջ դպրոցին - - | 10 „ | „ |
| Գանձակու Նորշէն Թաղի դպրոցին- | 10 „ | „ |
| Արբոյ Թարգմանչաց վանուց դպրոցին | 10 „ | „ |
| Բանանց գեղջ ուսումնարանին - | 40 „ | „ |
| Ախնաղու Նորաբաց օրիոր. ուսումնա. | 15 „ | „ |
| Պետերբուրգ ուսանող Տրդատ Մանդինեանցին ուղարկված է միանուագ - | 120 „ | „ |
| Գանձակումն մանր ծախս է եղած- | 10 „ | „ |
| Ընդ ամէնը - | 1,929 „ | 48 |
| Մնում է առ 1-ն Յունվարի 1875 ամի առ ձեռն պատրաստի զուտ գումար - | 9,272 „ | 78 |
| Խաղարկական բիլեթներ 45 հատ, հաշուելով իւրաքանչիւր 104 ռ. 50 կ. | 4,703 „ | 17 |
| Ընդ ամենն է | 13,975 „ | 95 |

Ծանօթութիւն. Ընկերութեան, ինչպէս եւ բոլոր անդամոց յայտնի է, 'ի սկզբանէ այսինքն մինչ ցառաջին ընդհանուր ժողով կազմելը, ունէր 45 2-դ փոխառութեան խաղարկական բիլեթներ յետագայ համարներով.

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սերի | 979 | համարից | սկսած 'ի | 1-էն | ց-25 | տոմս. | հատ | 24 |
| | 974 | „ | „ | 13 „ | „ 20 | „ | „ | 7 |
| | 979 | „ | „ | 31 „ | „ 35 | „ | „ | 4 |
| | 975 | „ | „ | 34 „ | „ 42 | „ | „ | 8 |
| | 8,485 | „ | „ | 28 „ | „ „ | „ | „ | 1 |
| | 17,157 | „ | „ | 22 „ | „ „ | „ | „ | 1 |

Յարգելի Անդամք ահա Խորհրդոյն ժողովոյ Ընկերութեան Տարեդարձի վեցերրորդ շրջանը վերահասաւ, մի և նոյն դահլիճում, ուր այսօր ժողովածենք, իւրաքանչիւր տարի Խորհրդական Անդամոց հաշիւը Ձեր վերահայեցողութեան մատուցանելոյ, յետոյ ես իմ անարժան բերանովս սովորութիւն եմ արել մի քանի բան խօսել Ձեզ հետ, ինչպէս իմ սիրելի եղբարցս հետ և Ձեր կողմից 'ի տեղի յանդիմանութեան խրախոյս եմ ստացել, որով նոր սիրտ ստացած այսօր ևս համարձակւումեմ Ձեր լսելիքը մի քանի խօսքով ձանձրացուցանել, եթէ կներէք այս իմ համարձակութեանս։ Սիրելիք կամենումեմ ասել, թէ երանիէ մեզ, որ վայելումենք այսպիսի խաղաղական օրեր, մեր Ամենաողորմած

---

Խորհրդական Անդամք մտածելով թէ այս բիլեթներից խաղացման ժամանակ, եթէ դուրս եկաւ տիրաժ, զորութեան 979 համարը սրանով շիջանումեն եւ բոլորեքեանք այսինքն 24 հատը 'ի միասին, նոյնպէս եւ 974 համարի հետ 7 հատը, 979-ի հետ 4 հատ, 985-ի հետ 8 հատ, ուստի օրագրութեամբ 'ի 16-ն Հոկտեմբերի տարւոյս սահմանեցին վերոյ յիշեալ 45 հատ տոմսակներից երկուսն, այսինքն 8485 եւ 17157 սերիները, որոնցից մի մի հատն թողնելով անփոփոխ մի եւ նոյն ժամանակ միւս տոմսակներից եւս մի մի հատ պահելով, մնացեալը յանձնել պարոն Գանձապետին փոխանակել 21-ն Մարտի 1875 ամի 'ի նորս երկու կարգ բաժանելով, կէսը առաջին փոխառութեան, իսկ միւս կէսը երկրորդ, պատուիրելով նմա, որ երբ նա ստացաւ նորերը առաջի առնել Խորհրդին նրանց համարները:

Գանձապետ պարոն Թումայեանցն, ստանալով 45 հատ փոխանակեալ բիլեթները 'ի 28-ն Դեկտեմբերի տարւոյս, առաջարկեց Խորհրդին: Վերոյիշեալ բիլեթներն, որոնցից 20-ն առաջին, իսկ 25 երկրորդ փոխառութեան են, ունին յետագայ համարները:

Կայսեր հովանաւորութեան ներքոյ, բայց պէտքէ իմանալ, որ մեր կայսրը, որպէս որդեսէր Հայր պահանջումէ, որ իւր որդիքը, բացի մարմնաւոր խաղաղութեան, ունենան և հոգևոր խաղաղութիւն ինչպէս ասումէ Տէրը՝ „Տուր Կայսերինը Կայսեր և Աստուծոյն Աստուծոյ: Ձեր հնազանդութիւնը դէպի մեր Կայսրը ինձ յայտնիէ, բայց հնազանդումք արդեօք միևնոյն հպատակութեամբ և Երկնաւոր Կայսեր, դա դուք գիտէք, այլ ինչպէս տեսնում եմ ես Ձեր կեանքը անցնումէ միևնոյն դրութեամբ, ինչպէս անցեալ տարիէր, Ձեր ոսկի ժամերը ոչ մի բանով չի վրդովւում, այլ վայելումք միևնոյն մարմնաւոր ուրախութիւնները և զուարճութիւնները, ինչպէս մի մեծատուն, որ ամենայն բանով լիացած, շտեմարանները աշխարհիս բարութիւններով լցրած, շատ տարիների համար դրամական ստացած՝ պիտի վայելի և կարօտութիւն չի

---

Ա. փոխառութեանը № 1/09,208· № 2/19,533· № 4/10,645· № 6/07,196· № 7/18,616·
№ 9/08,278, № 13/13,822· № 15/9,489· № 16/08,039, № 18/5,696· № 21/07,249· № 21/14,525·
№ 26/13,572· № 31/18,616· № 35/18·358· № 38/01,882· № 41/10,865· № 42/18,964· № 46/18,446·
№ 47/06,504· —20 հատ.

Բ. փոխառութեանը· № 3/12,570· № 6/16,890· № 6/16,889- № 9/12,665· № 13/10,235·
№ 14/00,974· № 16/12,649· № 17/04,827· № 20/00,783· № 21/00,979· № 22/17,154· № 26/04,627·
№ 28/08,485· № 29/12,011· № 31/979· № 32/979· № 33/979· № 34/979· № 34/00,178·
№ 37/18:734· № 38/00,973· № 39/01,675· № 40/17,762· № 44/19,889· № 45/12,613· —23 հատ·

ունենայ մի այլ ստացուածքի և հարստութեան թէ և նորանք լինէին գերբնական և մշտենջենաւոր։ Ուրախ եմ Ձեր բաղձաւորութեան, միայն մի բանով եմ զարմացած, ես ամենայն հնարք գործ եմ ածում, որ Ձեր պէս խաղաղ կեանք վարեմ անհոգ և ուրախ լինեմ միշտ, չեմ կարողանում, դեղ ու ճար չմնաց, որ գործ դրած չլինէի, բայց ոչինչ բժշկութիւն չի ստացայ։ Ներեցէք, Ձեր իւրաքանչիւրի ետևից գողի պէս ընկած, Ձեր քայլերի, որպէս թէ քննելով շատ աշխատեցի, որ Ձեր հանգստութեան և անհոգութեան պատճառը գտնեմ, չկարողացայ գտնել։ Ես լաւ եմ ճանաչում ինձ, որ մի շատախօս մարդ եմ և մտածումքի, գուցէ այս պակասութիւնն է գլխաւոր պատճառը, սակայն տեսայ որ ինձպէս շատախօսներ շատ կան և նորանք միշտ ուրախ են. և երբ ես տրտում տանը նստած լացեմ լինում, միևնոյն ժամանակ նորա ծիծաղումէն, սրանից կամայ ակամայ պէտքէի եզրակացուցանել, որ ես կամ ցնորուած կամ մելամաղձոտ մարդ եմ և տարօրինակ հիւանդութեան ենթարկուած. և յետոյ երբոր խոր զննեցի իմ ներսի կողմը, տեսայ որ իմ սրտի վերայ կան շատ պալարներ։ Դուք լաւ իմանումէք, որ սրտի ցաւին բժշկելու հնարք չգոյ այս աշխարհում։ Եթէ այսպէս է, ուրեմն ես պէտք է Ձեզ հետ մնաս բարեաւ անեմ, որովհետև իմ կեանքիս օրերը արդէն հասուածեն և ես Եզեկիէլ մարգարէն չեմ, որ ինձ ևս մի քանի տարի ժամանակ տայ Աստուած, որ կատարեալ առողջութիւն ստանամ և տեսնեմ իմ ցանկացած օրերը։ Գուցէ Ձեզանից ոմանք արժանի համարեցին հարցանել թէ, ի՞նչէ

պատճառն իմ տրտմութեանս կամ այս ցաւը ե՞րբէ պատահել ինձ և կամ ի՞նչպիսի մարդեմ ես, որ այդպէս համարձակ Ձեր թանգագին ժամանակը Ձեզանիցդ խլելով չնորաքան մարդոյ նման ցնորք եմ անում և Ձեր լսելիքը ձանձրացնում, եթէ այդպէսէ ուրեմն կ՚խնդրեմ լսել յետագայ անցքը, որ պատահել է ինձ իմ կեանքիս օրերում:

Սիրելիք ես մի հին ազգի որդի եմ, ես ունէի մի հոգևոր հայր, նա քահանայ էր, ունէի մայր, եղբայրներ և քոյրեր: Մեք բնակւում էինք մի մեծ և գեղեցկաշէն քաղաքում: Հեթանոս ազգերը արևելքից արևմտից, հիւսիսից եկան պատեցին մեր քաղաքի չորս կողմով, մի օրուայ մէջ այր և կին, ծեր և տղայ սրոյ ճարակ եղան, գեղեցկաշէն և հոյակապ տները և տաճարները հիմն ու վեր տապալեցին, կենդանի մնացած իշխանք, վարդապետք և և քահանայք գերի անկան, 'ի շարս որոց և իմ ծնողքս իւրեանց ընտանեօք, ես միայն տարաբաղդս ազատուեցայ թագկենալով մի խոր անձաւի մէջ և մնացի այնտեղ այնքան ժամանակ, մինչև որ թշնամիքը հեռացան: Ծնողացս սէրը սիրտս մաշում էր և չունէի դադար ո՛չ տիւ և ո՛չ գիշեր. Աղօթք հառաչանք և արտասուք ամենօրեայ կերակուրն էին դարձած ինձ համար:

Իմ հայրենիքը ամայի և անմարդաբնակ դարձած, ես որպէս մոլորեալ ոչխար չ՚գիտէի դէպի ո՞ր աշխարհը գնամ, որ կարողանամ գտնել իմ կորուստը. Քսան և հինգ տարի շարունակ ճանապարհորդեցի, քաղաքներ և գիւղեր չ՚մնացին, որ

ուր որ իմ ոտներս կոխած չլինէին, շատ մարդկանց երեսներ տեսայ, բայց իմ ծնողաց և ընտանեաց պատկերները ո՛չ մի տեղ չի պատահեցան ինձ, երբեմն եթէ մի քանի մարդիկ նմանումէին արտաքին ձևակերպութեամբ կամ հօրս կամ մօրս և կամ եղբայրս և քոյրերիս, սակայն մի փոքր ժամանակ նորանց հետ խօսալուց յետոյ, տեսնումէի, որ շատ աննմանութիւն կայ նրանց և ծնողացս բնութեան մէջ, զօրօրինակ զգեստը, դէմքը, ձայնը, մարմնոյ կազմուածքը նմանումէին ծնողացս, բայց հոգւոյ պատկերը ամենևին ջնջուած և յետին նշոյլից զըրկուած էին գտնուվում: Դժբաղդաբար շատերը կրումէին այն պաշտելի անունները և կոչումը, որ մեծ աշխատութեամբ էին ստացել իմ հայրս և եղբայրքս: Վերջապէս ամէն կողմից ճարահատեալ ուղևորոյս մօր պէս ամէն օր սպասումէք իմ օրհասին: Որդին, եթէ մեռանումէ նորա մայրը ողբերգուկանաց խումբը գլխին է ժողովում և սկսումեն գովասանել մեռեալը, թէ և նա եղած լինէր անբարոյական մարդ: Բայց սիրելիք իմ ծնողքս այնպիսի մարդիկ չէին, նրանք նախախնամութիւնից ընտրուածէին, հազիւ թէ գտնուէր մի աշխարհում նրանց պէս գերդաստան: Այս գերդաստանը նմանումէր մի պտղատու ծառերով և հոտաւէտ ծաղիկներով զարդարուած այգւոյ, ամէն ազգի որպէս թէ սանցիցէր ծնուած և զրուած աշխարհքի երեսով: Հայրս ինչպէս ասացի քահանայէր անունը Մելքիսեդեկ. նա Քրիստոսի աշակերտաց պէս բարձր դպրոցներում ուսում չէր առել. նա կատարելագործվումէր և ուսանումէր ամէն օր Սուրբ գրեանք կարդալով և

անդադար աղօթելով նա միշտ կասէր թէ ,,ով որ
,,կամենումէ առանց դժուարութեան ուսեալ լինել,
,,եթէ չ'քաւորէ, թող միշտ կարդայ, աղօթէ և խնդրէ
,,Աստուծանից իմաստութիւն, և թէ հոգւոյն սրբոյ
,,տուած դասերը շատ մխթարումէն մարդոյ սիրտը և
,,հոգին, քան թէ աշխարհիս իմաստութիւնները. նա
,,տայխսէ լոյսը և միտք, նա ուղղումէ մարդոյ բնու-
,,թեան անհարթ ուղերը և այսպէս հին մարդոյն
,,շինելով նոր մարդ, նորա սրտի մէջ շինումէ մի
,,տուն և այն տան մէջ թագաւորացնում Աստուծոյ
,,կամք, որով վարումէ նա իւր նոր կեանքը: Ինչպէս
,,Քրիստոս զօհեց իւր անձն մարդկային ազգի փրր-
,,կութեան, այնպէս և վերանորոգուած մարդը գիշեր
,,և ցերեկ մտածումէ և աշխատում, որ յառաջագոյն
,,գործէ այն բանը, ինչոր պիտի խրատէ այլոց, յետ
,,այնորիկ նա լինումէ սիրելի մարդկան և պաշտօնեայ
հասարակութեան և կնքումէն նորան Աստուածաէր և
,,մարդասէր անուններով, նա հիւանդների հետ հիւ-
,,անդէ, ցաւակցէ տրամեցելոց և մխիթարիչէ ամէն
,,տառապելոց,,: Ահա իմ հօրս պատկերի գլխաւոր
գծերը, իսկ եթէ կամենումէք թէ նա հասարակա-
կան կեանքում ինչպէս էր ապրում, լսեցէք, Նա մի
առողջ և բարձրահասակ մարդէր, նորա առողջու-
թեան պատճառը ժուժկալութիւնն էր 'ի կերակուրս
և ըմպելիս և ամուսնական կենցաղավարութեան
մէջ: Նա իւր գործքերով կարելիէ ասել կենդանի
քարոզ էր, նորա հետ խօսող մարդը, թէ իշխան
լինէր, թէ դատաւոր, պատկառումէր և երկնչում,
նորա երեսին ժպիտ անգամ ես չեմ նշմարել. նորա
խօսքը որպէս սուր կ'թափանցէր մարդոյ սրտում,
թէև լինէր մի հասարակ առարկայի վերայ. անամօթ

մարդ նորա երեսին նայելուց և հետը խօսելուց, իսկոյն իւր համարձակութեան երասանակը կ՚ամն-ձէր և ափի 'ի բերան, չէր կարող մի անզգոյշ բառ բերանից հանել: Ում որ պատահէր նա նորան լոյս կանուանէր, հոգւով հիւանդներին սիրտ և հոգի մխիթարող խօսքերով համեստութեամբ և հեզութեամբ կ՚բժշկէր և քար սիրտ ունեցողին, որպէս թէ քնից կ՚զարթուցանէր և նա ապաշխարանաց արտասուքը աչքերից թափելով բժշկուած կ՚վերադառնար իւր տուն: Այն գիշեր, երբ որ պիտի պատրաստուէր, որ վաղը պատարագ մատուցանէ, նա աղօթիւք և սաղմոսերգութեամբ կանցուցանէր: Իսկ առաւօտեան մինչև զանգակը հարելը նա արդէն եկեղեցումն էր: Այն օրը երբ նա կ՚մատուցանէր պատարագ և կ՚կատարէր Տեառնագործութեան խորհուրդը, սկսեալ 'ի նորատի մանկանց մինչև ցդողդոջուն ծերը արդէն հանդխացածէին եկեղեցում: Նա զգեստաւորուած հրաշալի քահանայական զգեստով այլակերպուած դուրս կ՚գար խորանից և երբ կ՚սկսէր ահեղ խորհուրդը կատարել նորա աջու ձախ կողմերում որպէս թէ կանգնածէին Մովսէս և Եղիայ և լուսմեն Փրկչի տնօրէնութեան խորհուրդը մատնութեան, չարչարանաց և խաչելութեան վերայ. Նա արդէն վերացածէր մտօք և ամենայն զգայարանօք: Այս միջոցին տեսնէք ի՞նչ խաղաղութիւն, ջերմեռանդութիւն և երկիւղ էր թագաւորում ժողովրդականաց մէջ. ամենեքեանք միահաղոյն ո՛չ աջ և ո՛չ ահեակ նայելով, աչքերը առած դէպի սեղան, մտքները դէպի երկինք անմռունչ աղօթումէին դէպի երկնաւոր հայրը, որին իւրեանց հոգւոյ աչ-

քերով տեսնումէին սեղանի վերայ քաշված և հրեղէն գունդերը նորա շուրջը պատած, ս՛ուրբ ս՛ուրբ տէր զօրութեանց ասելով, և միւս պաշտօնեայք ահիւ և դողութեամբ կատարումէին իւրեանց պաշտօնը։ Ո՞վ էր կարող համարձակուիլ ժողովրդից կամ կանանց ազգից, շշունչ կամ ծածուկ զրոյց անել միմեանց հետ. երեցփոխը իւր սեղանավաճառ մոմերով հրաժարուած խորանի մի անկիւնում կարողէր արդեօք այդ միջոցին մի օտարոտի ձայն հանել իւր կոպեկների մէջ հաշիւ տեսնելով։ Ամենեքեանք շատ լաւ էին ճանաչում իմ հօր բնութիւնը, որ առանց ակնածութեան և երկիւղի յանդիմանումէր, երբ մէկի վերայ նշմարումէր անուշադրութիւն և անվայել շարժուածք։ Այլ ինչ վերաբերումէ կանանց, նոքա պարտաւորուածէին թողնել բոլոր իւրեանց զարդերը և նորաձև հանդերձները տանը և հագած խոնարհ և անշուք, բայց մաքուր զգեստներով, Աստուծոյ տաճարը մտանել այնպէս որ աղքատը և հարուստը մի աստիճանի կանգնած մէկը միւսի վերայ բարձրայօն հայեացք չէր համարձակվում դարձուցանել։ Նոքա արդէն առանց ուսման ուսեալ էին և շատ խրատներ լսելով իմ հօրից հասկացելէին, որ ոսկեզօծ հանդերձը չի կարող զանազանել աղքատի հոգին հարուստի հոգուց և եթէ սուրբ տաճար մտնողը ներկայանալով առաջի Աստուծոյ, պէտքէ մինչև ցերկիր խոնարհութիւն և մի նշոյլ ամբարտաւորութեան ցոյց չտայ։ Այն ժամանակները թէպէտ ուսումնարաններ շատ կային, բայց եկեղեցին որպէս մի հոգևոր դպրոց լուսաւորումէր մարդկանց, ո՛չ թէ իւր քարաշէն պատերով, ճառագայթափայլ ջահերով և սրբոց պատկերներով, որոնք Աստուծոյ տան

զարդընէին համբուածք, այլ անդադար քարոզութիւնով: Երբոր իմ հայրս կամենար քարոզել, նորան հարկաւոր չէր յառաջագոյն պատրաստուել, նա ամենայն ժամանակ արդէն պատրաստուած էր, որովհետև նա որպէս բարի հովիւ ամեն ժամ իւր ոչխարների հետ 'ի միասին կեանք վարելով, ճանաչումէր ամենեցունց և իւրաքանչիւր նշմարած բարոյական հիւանդութիւնները և վէրքերը, նորա քարոզի նիւթերն էին, նորա ամեն մի խօսքը մարդոյ սրտում թափանցում էին, որպէս մի սուր նորա քահանայագործութեան ժամանակին ժողովուրդը վայելումէր մի խաղաղ կեանք, այժմեան մեր սրտերում և լեզուներում թագաւորող ախտերը, զորօրինակ ստախօսութիւն, անտեղի երդումը, բամբասանքը ևայլն նրանց մէջից անհետացել էին: Ինչպէս եկեղեցում նմանապէս և դուրսը նորա խոնարհ, լռակաց, համեստ և ամեն նեղութիւնը արհամարող, սիրոյ և միաբանութեան հետևող ժողովուրդ էին: Հեթանոսական շուայլ հարսանեաց և միւս օրինակատարութեանց ժամանակը վատնած գումարները ստացել էին մի ազնիւ նշանակութիւն. Օրինադրուածէր բոլոր ծախսերը. նշանակած գումարից աւելի վատնողը պարտաւորէր հասարակութեան արկղին նշանակած տուգանքը հատուցանել: Իմ հայրս առձիկ չունէր և չէր կամենում ունենալ, նա բարւոքէր համարում նախ աշխատել և ապա վարձատրուել, ինչպէս Քրիստոսի առաքեալքն էին անում, քան թէ արքունական թոշակառու ապահովուած ծոյլ և ծեր մարդոյ նմանել և տալ տեղիք մարդկային բնութեան մի քանի ախտերին, որոնք շատ շուտ

կարողեն օտարացնել հովուէն իւր հօտից, նա կասէր, թէ այնպիսի հովիւք կան, որ շատ երկիւղալիեն ոչխարաց համար, քան թէ գայլերը, այդպիսի հովիւները վարձկան կ'կոչուին, ո՛չ թէ բարի և քաջ հովիւ: Դա կասէր թէ, երբ որ կամենումք իմանալ թէ ոչխարները բարոյապէս մինչ ցո՛ր աստիճան նիհարացածեն, պէտքէ նայած հովուի վերայ, եթէ այդ վերջինս Փիզիգապէս կամ՝ բնականապէս շատ առողջ և կոշտ և հաստէ մի միայն ինքը հարստութեան նախանձելի աստիճանին և պարարտացնել, յայնժամ՝ կարողէք համոզուիլ, որ նորա ոչխարների մէջ մեծ կըլինին այսինքն վտանգ և հիւանդութիւնք պատահել: Նմանք նրանցից վերաւորուածեն լինում արբեցութեամբ, ոմն արծաթպաշտութեամբ, ոմն փառասիրութեամբ, ոմն սուտ ազգասիրութեամբ, ոմն երկուերեսանի, ոմն տա՛նը իւր կնոջ և ընտանեաց հետ զաղանաբար վարուելիս, իսկ հեզութեան և խոնարհութեան դիմակը երեսին առած հասարակութեան մէջը մանելիս, ոմն սատանայավայել հնարներով հարստութիւն վաստակած, առատաձիր և Աստուածասէր մարդու դեր խաղալիս, նուէրներ և պատարագներ մատուցանելով, որ կարողանայ առանց ապաշխարանաց իւր հին անօրէն չարիքները ուղղել և իշխանի վերարկուն հագած հասարակութեան ամբիոնի վերայ բազմելիս, իւր հրաշագործ մամոնայի ազդող զօրութեամբ բարբանջելիս, ոմն աշխարհիս ամեն լկտութիւնով կշտացած, 'ի մանկութիւնէ քրիստոնէական հօրիզոնից շատ հեռու կեանք վարած, այսօր մի ոտը ծերութեան միւս ոտը գերեզմանի դռներին դրած, որպէս մի յետին աղքատ ա՛ր

տէխ անելով մի դուցէ յանկարծ ցնորուի և ակամայ կամօք իւր հարստութեան մի փոքրիկ մասը ձեռքից դուրս գայ և նշտացնէ իւր ազգի որդւոց առանց ուսման տխամաւս կորնչող հազարաւոր անմեղ մանուկներին։ Ոմն հոգւոյ և մարմնոյ աչքերով կուրացած իւր մի հատ գողացած դահեկանի ետևից ընկած և նորա վերայ հազարներով վատնելիս, որ յետ առնի գողից, բայց բարեգործական դէպքերում մի կոպէկը խնայելիս։ Ոմն իւր հացի հետ բերանում իւր քրիստոնեայ եղբօր միսը ծամելիս. ոմն դըրոշմաւոր պայմանաթղթով մինչ ցմեռանիլը փարթամութեան սատանային մօտ 'ի ծառայութիւն մտանելով, ինքը առանց և վերջին աստիճան գիտութեան, հիւանդ և նիհար ոչխարների մէջ գլուխը բարձրացրած քարոզ կարդալիս իւր ընտանեկան կեանքում տեսած և լսած հրաշագործութեանց վերայ, և մի մի անունները տալով իւր փոքր մտած համառատ կերակուրների, իւր և իւրայնոց մեծածախս ոսկեզօծ հանդերձների վերայ զմայլելիս և ժողովրդի մէջ սուտ Ճամեցէտներէ պատիւ աշխատելիս։ Ոմն աղանդոյ պէս Աստուծոյ տունը մտանելով և այն տեղ ողորմելի հայր մերի քինթ ու պռունգը խոտրատելիս, սուտ բարեպաշտ ձևացած եկեղեցական արարողութեանց վերայ քննչի հայեցողութիւն դարձուցանելով, իւր չորս կողմը երկչոտ թռչունի պէս փոյթ ընդ փոյթ հայելիս և վերջին հայր մերի հետ մեա բարեաւ անելով տաճարից աչ–ա–ն գլեոտով դուրս գալիս։ Ոմն 'ի մանկութենէ գերբնական աշխարհից մի տեղեկութիւն չի ստացած և բարոյական կեանքից զուրկ, դաւարկ փորով բարձր

ձեռնարկները ոտից տակը առնելով, զանազան անօգուտ և դժուարամարս գիտութիւններով փորը լցրած, մի քանի այո՛ներով և ազգային երգերով իւր Հայրենիքը վերադառնալիս, մեր Գրիգոր բարայի փիլոնը գողացած և իւր վերայ քցած Լուսաւորիչ ձևանալիս: Ոմն անկիրթ մեծացած, իւր հաստատիոր հովուի նենգութիւնից և անզգուշութիւնից զզուած, իւր ազգականներից և ընկերներից փախչելով այլ հովուի փարախը մտնելիս և այնտեղ օտար գայլերի ջանքերից չարաչար տանջուելիս: Ոմն փոյթ ընդ փոյթ տէ՛ր, տէ՛ր կոչելիս և իւր ստեղծողի անունը անոտի վէճերում և զուարճութիւններում անդադար յիշելիս, բայց տէրի հրամաններից ո՛չ մինը չ՛ կատարելիս: Ոմն Հայ անունով և քրիստոնեայ կոչումով ամեն քայլում պարծենալիս, բայց գործքերով ո՛չ Հայի և ո՛չ քրիստոնէի նմանելիս: Ոմն մեռելների յիշատակը կատարելով կուշտ մարդկանց փորերը տարենը քանիցս անգամ կերակրելիս և կենդանի քաղցեալներին աչքաթող արած նոցա վերայ արհամարհանօք նայելիս: Ոմն Հայի մօտ օտար ազգաց վատաբանելիս, իսկ օտարների մօտ իւր Հայութիւնը ուրանալիս: Ոմն ամբողջ գիշերը արբեցութեամբ և անառակութեամբ անցուցանելիս, իսկ առաւօտեան կրօնաւորի փարաջով փողոց դուրս գալիս: Ոմն Մահմետին պաշտող, տնով տեղով շինացած հաճիների պէս, մատուկները ոսկով լցրած անտարբեր կեանք վարելիս և հասարակական միաբանութիւններից հրաժարուած, խոզի պէս իւր դունչը դէպ՛ի երկիր ցցած իւր հանապազօրեայ ո՛չ փրկութեան, կորստեան դրամահաշուեց աւետարանը կարդալիս:

Այն անիրաւ բաղդի բերմունքով կամ պատահմամբ, ազգասէրի, ո՛չ հոգի այլ լոկ անուն միայն ստացած, բարեսէր մարդկանց խումբը իւր ատամների տակը առած անխնայ մանրելիս: Այն իւրեանց մեծ և զօրեղ մարդկանց առաջին կառու դառնալիս, բայց իւրեանից տկարների վերայ առիւծաբար խրոխտալիս: Այն ամուրի կեանքը նախապատուելով, իւր թանկագին ազդեցութիւնը վատնող, և ժամանակը ստուերի պէս անցուցանող, և վնասաբեր հետեւանքներ յետին օրի համար թողնող թուլութիւններին և հեշտասիրութիւններին ծառայելիս, և արբուն հասակը թառամելուց յետոյ նոր 'ի նորոյ սուրբ ամուսնութեան անկողինը չոր ու ցամաք սիրով մտնելիս: Այն իւր կեանքի շատ օրերը աշխարհին ունայնութեանց մատաղ անելով, իսկ փրկութեան թանկագին ժամերը այս օրուանից եգուցուան թողնելիս, և հիւանդութեան դառն տանջանքներից յետոյ գերեզմանի դրանը հասած հոգւոյ աչքերը բացելով նոր 'ի նորոյ անյոյս և անօգուտ ապաշխարանաց ցանկալիս: Ահա սիրելիք կասէր հայրս „այն „վերքերը և վտանգները, որոնց պատահումեն խղ- „ճալի ոչխարները և գառները, երբ նոցա հովիւը „լինում է տգէտ և անհոգող: Կամենում եմ ասել „թէ միայն այն հովիւները, որոնք զինուորուածեն „մեր Էջմիածնայ արժանայիշատակ Լուսաւորչի նման „ուղիղ հաւատոյ և ճշմարիտ գիտութեան լուսով, „նրանք կարողեն պատրաստել ո՛չ միայն ճշմարիտ „քրիստոնեայք, այլ և հաւատարիմ հպատակներ „դէպի ազգը և դէպի թագաւորող Կայսրը“:

Սիրելիք ներեցէք, որ շատ խօսացի, եթէ դուք ձանձրացաք, բայց ես մի փոքր հանգստացայ, որովհետև սրտիս պարզի մի կողմը արդէն սկսել է փլուիլ և շատ դուրս բերել. բայց տկարութիւնս և անզօրութիւնս չեն թողում վերջացնել իմ խօսքս, իմ հօր պատկերի մնացեալ յատկանիշ գծերի վերայ պատմելով: Այժմ մի փոքր թոյլ տուէք խօսել և իմ մեծ եղբօր կերպարանաց վերայ, իսկ մնացեալ եղբարցս և քուերցս վերայ կ՚խօսեմ միւս անգամ, եթէ Աստուած աջողէ: Իմ մեծ եղբօր անունն էր Հայկազուն, նա իշխան էր և դատաւոր մեր քաղաքում, նորա նման թէպէտ շատերը կային բայց նա էր ընտրուած ծերերից, որ իշխէ: Նա մի այն մարդէր ամենայն մեղաց գլուխը ծուլութիւնն էր համարում, նորա խրատներից մի քանիսը այստեղ կամենումեմ պատմել, նա կասէր թէ „մարդոյ „համար ամէն բաղդից մեծագոյն բաղդը և ամէն „ցանկութիւնից մեծագոյն ցանկութիւնը աշխար- „հումս երկար ժամանակ ապրելն է, ուրեմն թէ մարդ „առանց օգտի է անցուցանում իւր օրերը, որպէս „կեանքի անարժան էակ, թող նրան կեանքից կտրեն „որ այլք չ՚դայթակղուին այսինքն ժողովրդի միջից „հեռացնեն և զրկեն քաղաքական կամ հասարա- „կական իրաւունքներից. սա մի և նոյն է մարդոյ կեանքը „կտրել: Տան աղբանոց տեղին, նաւերի յատակնե- „րումը հոտած ծովի ջուրը և քաղաքների ժահա- „հոտ տեղերը այն քան չեն ապականում օդը, որ- „քան ապականումեն ժողովրդին դատարկակեաց մար- „դիկ: Ովէ բուսուցանում իւրանից տատասկը, եղինջը „և այլ փշալի բանջարները, եթէ ո՛չ անփոյթ և

,,անգործ երկիրը, այսինքն այնպիսի տեղեր. ուր որ ,,չի հասած վարողների խոփը": Այսպիսի խրատներ շատ կ'սիրեր տալ իմ եղբայրս մեզ և իւր որդւոց: Նա սովորութիւն ունէր ամենայն գիշեր մեզ համար սուրբ գրեանքից կարդալ և հասկացնել, երբեմն կ'կարդար և մեր պապերի պատմութիւնը, բայց չ'կարողանալով զսպել իւր արտասուքը Երեմեայ մարգարէի պէս այսպէս կ'ողբար. ,,Ո՞վ քաղաք բազ-
,,մաժողով, ո՞ւր են քո որդիկդ, ո՞ւրեն քո բարու-
,,թիւններդ, ո՞ւր քո գեղեցկութիւնդ, լսի՛ր դու և
,,ես քեզ կասեմ ինչ՞ու այդպէս եղար. Դու
,,վերջին ժամանակներում որքան առաքինութիւն-
,,ներով շատ սուղ և պակաս եղար, այնքան մոլու-
,,թիւնով էժանացար, որովհետև քո իշխանքդ մի-
,,մեանց միսն էին կրծում և միաբանութեան նշոյլ
,,չէր մնացել նրանց մէջ, քո շուկայքդ և փողոցներդ
,,պարտակեցիր արհեստաւորներից և աշեստներից և
,,ջրեր պարսպացդ չորս կողմով անհուն, ունայն
,,ամլող մարդկանցով և քո հրապարակը անթիւ
,,ծոյլերով. այնքան չ'մնացին քեզ Պարսիկը, Յոյնք
,,Արաբացիք և միւս քո թշնամիք, որքան քո ծոյլ,
,,դատարկակեաց, անձնասէր և ո՛չ մարդասէր,
,,տիրանենգ որդիք, որո՛նք կորուսին քո բարի համ-
,,բաւդ: Երբոր քո որդիքը պարապումէին կրթու-
,,թեամբ և դիտութեամբ, լինումէին առաքինի և
,,աշխարհը նրանցից սասանումէր, բայց երբ տուին
,,իւրեանց անձը արծաթսիրութեան, որկրամոլու-
,,թեան և դատարկակեցութեան, եղան մոլի և ատե-
,,լի, ո՞հ ինչ ոսկի դար էր այն դարը. երբ ազգային
,,գործոյ համար չէր կարող ընտրուիլ խորհրդածու-

„յանդգամ այն անձը, առաքինի չէր և չէր ունենում
„ուսում և արհեստ. առանց արհեստի և գիտութեան
„հայը անբարոյական մարդ էր համարվում. ամեն
„նկարիչ էր, ամեն քանդակող, ամեն ձուլող, ամեն արծաթ-
„կազմող և ամեն ուսմանց պարապող"։

Իմ Հայրս կասէր թէ ո՛չ ոք չունի իրաւունք քրիստոնեայ կոչուիլ, եթէ ապրումէ հեթանոսի պէս և չի աշխատում լինել առաքինի և եթէ ով որ կամենումէ ունենալ այս աշխարհում խաղաղ կեանք, սիրելի լինել և ո՛չ ոքից չերկնչիլ և յետ մահուան թողնել անուն բարի, թող լինի նա առաքինի. „Նա կասէր թէ առաքինի լինելոյ հնարքը այս է". պէտքէ ճշմարտապէս հաւատալ, որ
„աներեւոյթ Աստուածը միշտ մեր մէջն է և մեր սր-
„տերը քննող, և հաստատապէս իմանալ, որ նա
„մեր գործերը տեսնում մեր խօսքերը լսում է և
„մեր սրտերի գաղտնիքը նորան յայտնի է, և եթէ
„այս մտքով հայենք առ նա, անմեղ կ'մնանք յաւի-
„տեան. յետ այնորիկ ձեր լեզուները կ'սանձէք չա-
„րախօսութիւնից, ձեր բերաններից կ'հեռանան նա-
„խատանաց աղտեղի խօսքերը, և ձեր շրթունքների
„վերայ պահապան կ'դնէք, որ չբամբասեն, յայն-
„ժամ հնազանդուած Աստուծոյ հրամանին անդա-
„դար սուրբ գրեանք կարդալով կ'աշխատէք, որ ձեր
„գործքերը հետևեն ձեր խօսքերին և այսպէս ու-
„ղիղ ճանապարհով ընթանալով, չէք մոլորուիլ և
„կ'լինէք միշտ պատրաստ գալստեան երկնաւոր դա-
„տաւորին, որոյ գալուստը գողի նման կ'լինի։ Նա
„միշտ մեզ կ'պատուիրէր, որ վերոյիշեալ խրատ-
„ները պահենք մեր մտքում որպէս հայելի և անե-

,,նայն որ այս օրինակը մեր առաջին ունենալ և թէ
,,անդադար աղօթելով, հոգին սուրբը մեզ կ՚սովո-
,,րացնէ շատ բաներ և կ՚տայ մեզ զօրութիւն, որ
,,լինենք արժանի հաւատարիմ որդիք և Քրիստոսի
,,քաջ զինուորներ. ամէն":

Ազնիւ մարդասէր ընկերակիցք իմ, կարծեմ այս կեանքում պատահած լինի Ձեզանից մի քանի-սին քնած ժամանակը տեսնել մի այնպիսի երազ, որի վերայ նա երբեք չէր մտածել: Մի այդպիսի երազ ինձ պատահեց այս վերջին ժամանակում: Ես տեսայ մարդկանց մի մեծ բազմութիւն մի դահլի-ճում ժողովուած, ամենքի ձեռքին մի մի ցուպ, և իմ գլխին բարձրացրած ասումէին միաբերան, խօսի՛ր, խօսի՛ր, եթէ ո՛չ կ՚մեռցնենք քեզ: Ես ճարա-հատեալ երկիւղից բերանս բացելեմ և միտս չէ, թէ ի՞նչ եմ խօսել: Ներեցէք, եթէ մի անզգոյշ բառ բացեմ թողել բերանիցս. միւս անգամ, եթէ այս փորձանքը ինձ պատահեց, կ՚հետևեմ լաւ խօսել:

Ընծայողներ Սերգէյ Վարշամեանց:

# ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

| Երես. | տող. | սխալ | ուղիղ |
|---|---|---|---|
| 10. | 19. | անդամ | անդամ |
| 12. | 11. | բարձր | աւելնորդ է |
| 13. | 14. | այս մասով | այսօր մասով |
| 14. | 19. | Ընկերութեան | Ընկերութիւն |
| ,, | 22. | սրանից | սրանցից |
| 19. | 2. | , | և ուսուցչի |
| 21. | 1. | երբեմն այնպէս | երբեմնապէս |
| ,, | 3. | մի գիւղական | մեր գիւղական |
| 22. | 11. | Անդամք | Անդամ |
| 23. | 15. | III. | աւելնորդ է |
| 26. | ծա. 2. | այտնիէ | յայտնիէ |
| 27. | ես 2. | զօրութեան | զորօրինակ |
| 27. | 6. | մտուցանելոյ | մատուցանելուց |
| 28. | 16. | ցրուած | ցրած |
| 26. | 9. | քայլերի | քայլերը |
| ,, | 26. | հարուածներ | հաշուածներ |
| 31, | 16. | սպասումէք | սպասումէի |
| 31. | 25. | ազգի | ազգեր |
| 32. | 21. | կամենումէք թէ | կամենումէք իմանալ թէ |
| 33. | 25. | տեսնէք | տեսնէիք |
| 34. | 26. | խոնարհութիւն | խոնարհուի |
| 36. | 9. | կօշտ | կուշտ |
| 36. | 23. | անողիղ | անուղիղ |
| 38. | վերջին տող | | այլ կորստեան |
| 29. | 4. | իւրեանց | իւրեանից |
| 39. | 14. | աշխարհին | աշխարհային |
| 39. | 23. | անհօգող | անհոգող |
| 42. | 1. | անձը, առաքելի | անձը որ առաքելի |

Гос. Библиотека
Арм.ССР
им. А. Мясникяна

5 ար.

ԳԻՆԸ
5 Ռ — Կ.

Хаиф

2013